



ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(ԹՎԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ)

Օրմանյանը ծնվել է 1841 թվականի փետրվարի 11-ին Կոստանդնուպոլսի Պերա արվարձանում: Ծնողներն են եղել հայրը՝ դեղագործ Անտոն Օրմանյանը և մայրը՝ Եղիսաբեթ Միասերյանը: Ավագանի անունն է եղել Պողոս:

Օրմանյանն իր նախնական կրթությունն ստանում է Կոստանդնուպոլսում: Տասը տարեկան հասակում մեկնում է Հոռոմ և ընդունվում Անտոնյանց Ս. Լուսավորիչ վանքը:

1855 թվականի դեկտեմբերի 25-ին նորընծա է օրհնվում և վերանվանվում Մաղաբիա: Երեք տարի վերջ կրոնավոր է դառնում և կոչվում «եղբայր Մաղաբիա Օրմանյան, միանձն Անտոնյան» և հաճախում է Վատիկանյան դպրոցի ճարտասանության դասարանը:

1858 թվականի նոյեմբերին անցնում է Ս. Ապողինարի դպրոցը:

1860 թվականի ապրիլին ընդունում է դպրության շորս աստիճանները: Երեք տարի վերջ ձեռնադրվում է սարկավագ և ապա, 1863 թվականի օգոստոսի 11-ին, քահանա է ձեռնադրվում Երվարդ արքեպիսկոպոս Հյուրմյուզյանի ձեռքով:

1865 թվականի մայիսի 27-ին հանձնում է աստվածաբանության հրապարակային բնութիցունը և օգոստոսին ստանում մագիստրոսության օրհնություն: Նույն տարվա հոկտեմբերին նշանակվում է հայերենի ուսուցիչ Պրոպագանդայի դպրոցում:

15 տարի անընդհատ Հոռոմում մնալուց հետո, 1866 թվականի հունվարի 19-ին մեկնում է Կոստանդնուպոլիս, ուր Անտոնյանի միաբանության բարտուղար է նշանակվում: Նույն ժամանակաշրջանում Թաբսիմի Ան-

տոնյանց վարժարանում տեսչի և ուսուցչի պաշտոններ է վարում:

1867 թվականի հոկտեմբերին մեկնում է Հոռոմ՝ Հասունյանց հարցերով զբաղվելու համար: 1868 թվականի օգոստոս-սեպտեմբերամիսներին Հոռոմում ստանում է իմաստասիրության, աստվածաբանության և եկեղեցական իրավագիտության մասնագիտության տիտղոսը: Այնուհետև Հոռոմի աստվածաբանական կաճառի անդամ է նշանակվում:

Նույն տարվա հոկտեմբերին վերադառնում է Կոստանդնուպոլիս:

1869 թվականի նոյեմբերին, որպես աստվածաբան, մասնակցում է Վատիկանյան ժողովին:

1870 թվականի ապրիլին փախչում է պապական հալածանքից և համաձայնվում Կոստանդնուպոլսում, ուր և հրատարակում է «Հայ աբեղեյան կաթողիկոսյաք» գիրքը իտալերեն լեզվով, ապա՝ «Մեկվերսուրուս կամ Թուրքիա և պապություն» գիրքը՝ դարձյալ իտալերեն լեզվով, «Աբեղեյան կաթողիկոսյաք կրոնական ազատությունը և քաղաքական իրավունքները» և «Վատիկան և հայք» գրքերը ֆրանսերեներով: Այս վերջինը նախորդ երկու գրքերի հետ, պապական արգելալ գրքերի (ինդեքս) ցանկն է անցնում:

Հոռոմում, 1875 թվականի հունվարի 24-ին, Օրմանյանը հանդիպում է ունենում Իտալիայի ազգային հերոս զորավար Գարիբալդիի հետ:

1876 թվականի ապրիլի 6-ին Օրմանյան վերջնականապես որոշում է իր կապերը խզել Վատիկանի հետ:

1877 թվականի փետրվարի 11-ին Օրմանյանը զիմում է ներկայացնում Ներսես պատրիարք Վարժապետյանին՝ Հայ Եկե-

ղեցու գիրկը դառնալու Պատրիարքն ասում է նրան. «Տեղդ կեցիր և խմորե, մենք քեզ արդեն կձանշանք»:

Օրմանյան վարդապետ մոտ երեք տարի ևս «իր տեղն է մնում» և այդ շրջանում Ղալաթիայի Աղզային մատենադարանի վերատեսուչ է նշանակվում և մի շարք այժմեական դասախոսություններ է կարդում ազգասիրության մասին:

1879 թվականի նոյեմբերի 28-ին, կիրակի, Գյուտ խաչի տոնի օրը, Օրմանյան պաշտոնապես և հանդիսություններ ընդունվում է Հայաստանյայց եկեղեցու ծոցը ներսես պատրիարքի կողմից, իր հետ բերելով 45 տղամարդկանց և 30 կանանց: Նույն օրը, Գում-Գափուի Մայր եկեղեցում, ստանում է ծայրագույն վարդապետության աստիճանը՝ Վարժապետյան պատրիարքի ձեռքից: Ապա բարոյիչ է կարգվում Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցուն: Հաջորդ տարին Վանորբից խորհրդի անդամ է լինում, ապա 1880 թվականի ապրիլի 2-ին ընտրվում է առաջնորդ Կարինի թեմին:

1881 թվականի հոկտեմբերին Կարինում բացվում է Սանասարյան վարժարանը, որի տեսչական մարմնի նախագահությունը ստանձնում է Օրմանյան:

Ազգային Պատրիարքարանի հրահանգով Օրմանյանը Կարինից անցնում է Մուշ՝ իրր քննիչ Մշո վիճակի:

1883 թվականի ապրիլին Օրմանյան Կոստանդնուպոլիս է հասնում Կարինի ծանոթ ղեպեքերի կապակցությամբ և ապա վերադառնում այնտեղ:

1886 թվականի հունիսի 8-ին, Գարեգին վարդապետ Սրվանձությանի հետ, Ս. Էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրվում Մակար կաթողիկոսից, Էջմիածնից Օրմանյան սրբազանը անցնում է անմիջապես Վան՝ Աղզային Պատրիարքարանի կողմից իբրև քննիչ և այնտեղից վերադառնում Կարին:

1888 թվականի հուլիսի 6-ին Օրմանյան թողնում է Կարինի առաջնորդությունը և Մակար կաթողիկոսի հրամանով հրավիրվում Ս. Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում աստվածաբանություն դասախոսելու համար:

1889 թվականին վերադառնում է Կոստանդնուպոլիս և տեսուչ է նշանակվում Արմաշում բացվելիք եկեղեցական վարժարանին:

1892 թվականին Օրմանյան, որպես Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի պատգամավոր, Էջմիածնում մասնակցում է կա-

թողիկոսական ընտրության և արևմտահայերի քվեն տալիս է Խրիմյանի օգտին:

1892 թվականի մայիսի 20-ին վերադառնում է Արմաշ՝ որպես վանահայր և վերատեսուչ Դպրեվանքի: Արմաշում նրա և Դուրյանի ջանքերով լույս է տեսնում Դպրեվանքի «Մասիս» կրոնաթերթը: Նույն տարվա սեպտեմբերին Դպրեվանքի 9 դպիրներից 7-ին սարկավագության աստիճան է տալիս:

1895 թվականի հունիսի 18-ին Օրմանյանը արեղա է ձեռնադրում Դպրեվանքի առաջին 7 սարկավագներին և մի ամիս վերջ նրանց վարդապետական մասնավոր զավազանի իշխանություն է տալիս:

1896 թվականին Օրմանյանը Թուրքիայի հայոց պատրիարք է ընտրվում: Այդ պաշտոնը նա վարում է 12 տարի:

1908 թվականի մայիսի 10-ին հռչակվում է Օսմանյան Սահմանադրությունը և Օրմանյան սրբազան բռնադատվում է հրաժարվել պատրիարքությունից և ամբաստանվում է:

1910 թվականին Օրմանյան տպագրել է տալիս «Հիշատակարան երկոտասանամյա պատրիարքության» գիրքը, որի մեջ նա պաշտպանվում է իր դեմ հարուցված ամբաստանություններից:

Օրմանյան սրբազան պատրիարքությունից հրաժարվելուց հետո զբաղվում է հատկապես գրական գործունեությամբ:

1911 թվականի փետրվարի 11-ին ավարտում է «Համապատում» գրքի տպագրությունը: Մի քանի ամիս հետո Ֆրանսերեն լեզվով հրատարակում է «Հայոց եկեղեցին»: Մի տարի վերջ հրատարակում է «Ազգապատում»-ի Ա և Բ պրակները:

1913 թվականի հունվարի 3-ին, Ազգային Երեսփոխանական ժողովը, քննելով Օրմանյան սրբազանի դեմ եղած ամբաստանությունները, նրան արդարացնում է:

1913 թվականի մարտի 2-ին Օրմանյանը ընտրվում է պատգամավոր եկեղեցական համագումարի: Նույն շրջանում նա կարդում է դասախոսություններ Կոստանդնուպոլսում: Նույն տարվա օգոստոսին ընտրվում է Կրոնական ժողովի անդամ և ապա Եգիպտոսի թեմի առաջնորդ, բայց մերժում է:

1914 թվականին Ազգային վարչությունը նրան նշանակում է լիազոր պատվիրակ Վահան Թեքեյանի հետ, հարթելու համար Երուսաղեմի կնճիոր:

Օրմանյանը Երուսաղեմում մնում է 1914 թվականի մայիսի 19-ից մինչև 1917 թվականի նոյեմբերի 13-ը: Ս. Հակոբյանց վան-

քում նա կատարում է մի քանի պաշտոններ, դասավանդում է ժառանգավորաց վարժարանում, սկսում է գրի առնել «Խոհք և խոսք»-ը:

Օրմանյան սրբազանի կյանքի վերջին հանգրվանն է լինում Դամասկոսը: Երբ դաշնակից բանակները մոտենում են Երուսաղեմին, Կիլիկիայի Սահակ կաթողիկոս հապա-

յանի հետ, նա ևս տարվում է Դամասկոս, որտեղ ավարտում է իր «Խոհք և խոսք»-ը:

1918 թվականի մայիսի վերջերին Օրմանյան սրբազանը վերադառնում է Կոստանդնուպոլիս, որտեղ նոյեմբերի 19-ին, 78 տարեկան հասակում, կնքում է իր մահկանացուն:

ՀԱԿՈՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

